ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մասը և 41-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկման համար սահմանել հետևյալ ընթացակարգը՝

1) Մինչև 10 րոպե տևողությամբ հիմնական ելույթով հանդես է գալիս հիմնական զեկուցողը:

2) Հիմնական և յուրաքանչյուր հարակից զեկուցողին հարցեր տալու համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը՝

ա) հարցերի համար՝ երկուական րոպե,

բ) հարցերին պատասխանելու համար՝ երեքական րոպե,

գ) հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե;

3) Մինչև 3 րոպե տևողությամբ հարակից զեկուցմամբ հանդես է գալիս գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը՝ հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար:

4) Հայտ ներկայացնելու դեպքում մինչև 3 րոպե տևողությամբ ելույթ են ունենում խմբակցությունների մեկական ներկայացուցիչ:

5) Մտքերի փոխանակության համար հատկացվում է երեքական րոպե:

6) Մտքերի փոխանակությունն ավարտվում է հիմնական զեկուցողի՝ մինչև 10 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով:

7) Մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո նիստը նախագահողը հայտարարում է նախագծի քննարկման ընդմիջում՝ առնվազն 3 ժամ՝ նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկներ ներկայացնելու համար:

2. «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերսկսումը կազմակերպել սույն որոշման 1-ին մասի 7-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից 2 ժամ հետո:

3. «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերսկսման քննարկման համար սահմանել հետևյալ ընթացակարգը՝

1) Մինչև 10 րոպե տևողությամբ հիմնական ելույթով հանդես է գալիս հիմնական զեկուցողը՝ նախագծի վերջնական տարբերակը և առաջարկությունների ամփոփաթերթիկը ներկայացնելու համար:

2) Նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած պատգամավորների կողմից հարցեր տալու համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը՝

ա) հարցերի համար՝ երկուական րոպե,

բ) հարցերին պատասխանելու համար՝ երեքական րոպե,

գ) հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե;

3) Մինչև 3 րոպե տևողությամբ հարակից զեկուցմամբ հանդես է գալիս գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը՝ հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար:

4) Հայտ ներկայացնելու դեպքում մինչև 3 րոպե տևողությամբ ելույթ են ունենում խմբակցությունների մեկական ներկայացուցիչ:

5) Մտքերի փոխանակության համար հատկացվում է երեքական րոպե:

6) Մտքերի փոխանակությունն ավարտվում է հիմնական զեկուցողի՝ մինչև 10 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով: